

ԿՈՄԻՏԱՍՆ ԱՅՍՈՐ

Այսօր էլ, երբ մենք նշում ենք Կոմիտասի սուրբ ծննդեան 100-ամեակը, հակառակ այդ հարիւր տարուայ հեռաւորութեան՝ Կոմիտասը ամենապարզ և բոլոր ապրող-ներին մէջ: Բայց միաժամանակ նա շատ վաղուց է դարձել նաև խորհրդանշի:

Եւ ահա, նկատի ունենալով այն յայտնի իրավիճակը, որի մէջ է գտնուում աշխարհասփիւռ մեր Ժողովուրդը, մենք պարտաւոր ենք ասելու նաև՝ որ հիմա, տուեալ իրական եւ տիրական հանգամանքներում մայր հայրենիքի շուրջ համախմբուելու, արտասահմաններում Հայ համազգային ու դին կենդանի պահելու խնդրում Կոմիտասի գործը վիթխարի է:

Կոմիտասն է այն կաժուրջը, որին չի հակում ո՛չ մի զսահմանադաճ, որով անցնելու համար չի պահանջուում ո՛չ մի չփոքաց՝ ո՛չ մի կողմից եւ ո՛չ ոքի կողմից:

Այս է Կոմիտասի առաքելութիւնն այսօր: Արծէ աւելացնել նաև, որ շոր չէ այս առաքելութիւնը: Մօտ վաթսու տարի առաջ, դիմելով Կոմիտասին, ականաւոր Տ. Կամաքարականն ասել է. «Անցեալ դիշեր ... երդերով ու բարբառելով ... Հայաստան ուխտագնացութեան տարիք զմեզ, կամ լաւ ես է ըսել՝ քիչ մը Հայաստան բերիք Եդիպտոսի Հայերուս. մենք կը կարծէինք թէ Հայ Պրոֆեսուրը որ էլ միածնէն կու գայ, միւսն միայն կը բերէ. դուք Մասիսն ու Արափածը փոխադրեցիք հոս պահ մը. ո՞վ ըսաւ թէ լիոններ չեն քալեր...»:

Այս ար ճշմարիտ է առուած վաթսուն տարի առաջ, վաթսուտասուրկ աւելի ճշմարիտ է այսօր, որովհետեւ Կոմիտասն այսօր վաթսուտասուրկ աւելի է շնորհակալ լինում, «քիչ մը Հայաստան» է տանում

ամենուրեք՝ որտեղ Հայաստան չկայ բայց կայ Հայ, իսկ բուն Հայաստանում էլ «եկաւ, ոիրցնել մեզ ինչ որ մերն էր, բացաւ մեր վարագուրուած աչքերը մեր սեփական արժանիքներուն առջեւ, վերադարձուց մեզի դէպի մեր հայրենի բնագաւառն ու օճախը, մեր անդն ու անդաստանը, բառին առարկայական թէ այլաբանական իմաստով»:

Սա էլ խոստովանութիւնն է ոչ թէ Կոմիտասի սաներից մէկի միայն (Վ. Սարգսեան), ոչ էլ միայն մէկ սերնդի, այլ մի քանի սերունդների, խոստովանութիւնն ու վրկայութիւնն ոչ միայն հառաջի Աստուծոյ եւ մարդկան, այլ «Եանդիման փորձութեան ու փրկութեան»:

Ահա թէ ո՞վ է Կոմիտասը...:

Բայց Կոմիտասը, այս ամէնից առաջ ու յետոյ՝ աւաղցիչն է, ինչպէս՝ որ է նաև Մեսրոպ Մաշտոցը:

Ուրեմն եւ՝ մեր պարտքը միայն պաշտամունք չէ, այլև ուսանել, ուսանել ո՛չ միայն իր գործից՝ այլև կեանքից:

Կոմիտասին լսելուց յետոյ Վիեննայի աւանաւոր դատախոսներից մէկը շատ յուզուած ասել է. «Ձեմ հակահեղու. եթէ Աստուած Հայոց ձայնը չլսի, ապա ո՞ւմ ձայնն է շնչելու»: Վերջինք, որ նմանօրինակ մի ճիշ էլ արձակել է ինքը Կոմիտասը՝ իր նամակներից մէկում յայտնելով այն հոգեխաբարի միտքը, թէ ինչո՞ւ է երկրագունդը բոլորի համար կլոր եւ միայն Հայերի համար անկիւնաւոր. անկիւն՝ որի առջեւ կանգնեցնում են պատժուածին:

Եկէք ապարդիւնօրէն դուրս չջարգենք այս անեղծուածի վրայ: Եթէ մեզ համար երկրագունդը կլոր չէ, այլ անկիւնաւոր, ա-



Գրքի շնորհիվ հեղինակ

Կ Ս Տ Ր Ս Ս

պա մենք պիտի ապրենք նրա ինչ-որ ան-
կիսնում, որ է հայրենիք մասնաժողով:

Ու եթէ խօսքը ապրելուն է հասել, ապա
ինչպէ՞ս չիլենք որ կոմիտասը քնում էր
չոր քաղաքի, իսկ եթէ դա էլ չկար՝ չոր
տախտի վրայ:

Եւ ուր առիթով չիլենք Փ. Թէրլէմէզ-
եանի վկայութիւնը: Փարիզում այցելելով
կոմիտասին եւ հարցնելով. «Կ'երգե՞ս», նա
իւր մտերմից ի պատասխան լսում է. «Ես
չիմա երգում եմ միայն ինձ համար»:

Սարսուղդու խօսք է:

Բայց այդպէս ասել է ... անատոզ Վո-
միտասը: Եկէ՛ք ... առողջ լինենք և դէմ լի-
նենք այս աշուշտ խօսքին: Եկէ՛ք երգենք ...
ոչ մեզ համար միայն:

Կոմիտասեան ե՛ւս մի գառ:

Ինչքան կոմիտասեան է պնդում, որ ամէն ուղի

ունի իր անուրանալի եւ անշփոթելի կոկոր-
դըն ու հազազը:

Ուրեմն չմոռանանք, որ ի՛նչ լեզուով էլ
խօսելու լինենք՝ մեր կոկորդն ու հազազը
մնում է հայկական: Այլ կերպ ասած՝ ամէն
մէկն իւրովի, ամէն մէկն իր բնապատուած
ապրելիք եւ դորձենք կոմիտասաբար, ջա-
նանք ամէն կերպ նմանուել նրան՝ ամէն
ինչով:

Ամէն ինչով, բայց ո՛չ իր ... վերջով:
Եթէ կոմիտասը «սխալ է» արել, ապա դա
այն է որ ... խելագարուեց: Մենք դրա ի-
րաւունքը չունենք: Նա խելագարուեց ...
բոլորի՛ս փոխարէն եւ բոլորի՛ս համար:

Նաեւ այն բանի համար, որ մենք խել-
ներս դուրսներս պահենք՝ խելօք ապրելու,
խելօք դորձելու եւ խելօք մեռնելու՝ յա-
նուն այն ազդի, որ կարող է կոչուել ...
կոմիտասեան:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Երեւան

